Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թ.
ապրիլի 3-ի նիստի N 13
արձանագրային որոշման

ՍԵՎԱՆԻ ԻՇԽԱՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ ՍԵՎԱՆԱ ԼՃՈՒՄ ԻՇԽԱՆԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՁԿՆԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԾՐԱԳՐԻ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎՈՂ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հիմնադրամ	Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամ
Ծրագրի կառավարիչ	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի կառավարիչ
Առարկան	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի կառավարչի ծառայությունների մատուցում
Պայմանագրի կնքման ժամկետ	Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի մասին Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10 օրվա ընթացքում
Պայմանագրի գործողության ժամկետը	5 տարի
Կողմերի պարտավորությունները	Հիմնադրամը պարտավորվում է. 1. վճարել Ծրագրի կառավարչին մատուցված ծառայությունների համար, 2. Ծրագրի կառավարչին տրամադրել նրա կողմից պայմանագրով սահմանված ծառայությունների մատուցման տեխնիկական առաջադրանքը:
	Ծրագրի կառավարիչը պարտավորվում է Սևանա լճում իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման համալիր ծրագրի շրջանակներում. • մշակել ծրագրի կատարողական ցուցանիշները, դրանց մշտադիտարկման կարգի նախագիծը, սահմանված պարբերականությամբ գնահատել ծրագրի ընթացիկ արդյունքները և հետագա ընթացքի վերաբերյալ առաջարկությունները ներկայացնել հիմնադրամին, • առաջարկություններ մշակել ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ներդրումների ուղղությունների վերաբերյալ և ներկայացնել հիմնադրամին, • առաջարկություններ ներկայացնել հիմնադրամին ծրագրի շրջանակներում թողարկված արտադրանքի (մանրաձուկ, ապրանքային ձուկ, ձկնամթերք և այլն) ինքնարժեքի և գնի վերաբերյալ, • մշակել համապատասխան առաջարկություններ ծրագրի արդյունավետ զարգացման և հիմնախնդիրների լուծման համար և ներկայացնել հիմնադրամին,

	• մշակել Սևանա լճում ցանցավանդակային տնտեսություններ հիմնելու թույլտվության տրամադրման կարգի նախագիծը և ներկայացնել հիմնադրամին, • օժանդակել Սևանի իշխանի արտադրության և իրացման արժեշղթայում ու դրանց օժանդակող ճյուղերում ներդրումների ներգրավմանը:
Կողմերի պատասխանատվությունը	Կողմերը Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն պատասխանատվություն են կրում պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: